

տական ու խմբական յուշերու հանրայնացումը անշո՛ւշ տպիտի նպաստեն, որպէսզի մռայլ այդ երեւոյթը պարզուի քիչ մը ու Սփիւռքի որդիները առանց մեղադրանքի, ինչպէս առանց կարմրելու տեսնեն անկէ ներս ինչ որ մեր ցեղը տուաւ, նոր օրերու դուռներուն իբր որակ: Մեր զոյգ գրականութեանց կերտումը միայն բաղդատելի է այդ շքեղ մղձաւանջին: Ատոր գնահատումը չէ, որ կը փորձեմ: Բայց անցան հետախաղաղ նաւթային կառուցումները, բան մը չձգելով մեզի: Նոյն բախտը կը սպասէ մեր վաճառականութեան այնքան յոխորտ ասպետներուն, որոնք դեռ կը յամառին Պոլսոյ ջուրերուն կապել իրենց նաւերը: Չկայ այսօր էֆէնտիւթիւնը: Չկան փաշաները: Բայց կայ գրքոյկը, որ կը պատմէ, թէ ինչպէս մեռնիլ գիտցան մերինները, երբ մահը եկաւ իրենց հետ ճակատ ճակատի:

Չատագովութիւն մը չէ, որ կը փորձեմ: Ինծի համար սիրոյ եւ յարգանքի արժանի են տասը հայեր, որոնք քով քովի կու գան բան մը կանգնելու: Սխալը կամ ուղիղը միշտ պարագայական ճշմարտութիւններ են ու քիչ են այն առիթները, որոնց մէջ մենք տեսանք յստակ: Յեղափոխութեան հա՞րկը: Բայց խելօքութեան փա՞ստը, եթէ կը բարեհաճիք: Ո՞ւր են երկու միլիոն քիւրտերը, որոնք մեզմէ ետքը չկրցան խելօք մնալ: Ո՞ւր՝ երեք միլիոն յոյները, որոնք ոչ մէկ մեղք գործեցին: Բայց պէտք է պատմել, ուրիշներուն ձգելով դժխեմ այս հարցին շուրջը իրար գլուխ պատռելու տխուր փառքը: Իմ փափաքը՝ տալն է դէմք մը այդ օրերէն, բաւական ընդարձակ, ուր մուտք ունենային մեր յեղափոխութեան կրկնակ երեսները, գէնքին ու մտքին զոյգ հոսումովը լուսաւոր: Մաթիկ Մելիքխանեանցով զայն նուաճելու սա ծրագիրը վախ կու տայ ինծի, որ կ'աշխատիմ նիւթի վրայ, ատաղձի վրայ: Ու սա սպառածին՝ զուրկ եմ այդ ամէնէն: Մնաց որ, երեսուն տարի առաջ, անկարող էի ընդգրկել ինծի ներկայացող առիթը, տարիքի, մտայնութեան խոշոր թերիններուն պատճառով, թերութիւններ, ինձմէ աւելի